«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող «Նախաձեռնողի հարստացուցիչ ֆաբրիկան նախագծային հզորությամբ (տարեկան 1 մլն տ հանքաքարի վերամշակում) շահագործում, «Գեղանուշի պոչամբարի վերակառուցում», «Գեղանուշ գետը տեղափոխող թունելի վերանորոգում» աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ հանրային լսման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

09.07.2025թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /03.05.2023թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2025 թվականի հուլիսի 3-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող «Նախաձեռնողի հարստացուցիչ ֆաբրիկան նախագծային հզորությամբ (տարեկան 1 մլն տ հանքաքարի վերամշակում) շահագործում, «Գեղանուշի պոչամբարի վերակառուցում», «Գեղանուշ գետը տեղափոխող թունելի վերանորոգում» աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ հանրային լսման վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «ԷՆ ԷՌ ԷՄ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ՝ Վահրամ Ավագյանը, «Ակունք-Ֆիրմա» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն՝ Հովհաննես Նիկողոսյանը, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավար՝ Գևորգ Փարսյանը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2025 թվականի հունիսի 6-ի թիվ 092 (7320) համարում,

Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարությունների բաժնում:

Խոսք (Գևորգ Փարսյան)- Հարգելի ներկաներ ողջունում եմ Ձեզ՝ հանրային քննարկմանը ներկա գտնվելու համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի համաձայն «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲ ընկերությունը դիմել է Կապանի համայքնապետարան հանրային լսման վերաբերյալ հանրությանը ծանուցելու և կազմակերպելու վերաբերյալ: Նախատեսվող գործունեությունը վերաբերում է «Նախաձեռնողի հարստացուցիչ ֆաբրիկան նախագծային հզորությամբ (տարեկան 1 մլն տ հանքաքարի վերամշակում) շահագործում, «Գեղանուշի պոչամբարի վերակառուցում», «Գեղանուշ գետը տեղափոխող թունելի վերանորոգում» աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ: Նախատեսված է հանրային քննարկման օրակարգ: Ըստ օրակարգի՝ նախնական գնահատման հայտի վերաբերյալ կզեկուցի «ԷՆ ԷՌ ԷՄ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Վահրամ Ավագյանը, այնուհետև՝ կզեկուցի «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ բնապահպանության բաժնի պետ Աիդա Ալեքսանյանը: Եթե լինեն հարցեր, առաջարկություններ, ելույթներ կներկայացնեք և վերջում ես կամփոփեմ: Այժմ կզեկուցի «ԷՆ ԷՌ ԷՄ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Վահրամ Ավագյանը:

Զեկույց (Վահրամ Ավագյան) - Մեծարգո Պարոն համայնքապետ, հարգելի ներկաներ, ես, ինչպես Պարոն Փարսյանը նշեց, ներկայացնում եմ նախագծերն իրականացրած «Էն Էռ Էմ» ՓԲ ընկերությունը: Նախատեսվող գործունեության վերաբերյալ նախաձեռնողը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքով սահմանված կարգով դիմել է Շրջակա միջավայրի նախարարություն, ներկայացրել հայտ, քանի որ նախատեսվող գործունեության բոլոր թվարկված երեք բաղադրիչները վերաբերվում են արդեն իրականացվող գործունեության ընդլայնմանը և փոփոխությանը, հիշյալ օրենքով նախատեսված է հայտի ներկայացում, որի ուսումնասիրության արդյունքներով Շրջակա միջավայրի նախարարությունը եզրակացություն է տալիս, արդյոք այդ գործունեության փոփոխությունը, ընդլայնումը ենթակա է Շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությանը: Մենք, Շրջակա միջավայրի նախարարության հունիսի 23-ին ստացված պատասխանով, դրական եզրակացություն ենք ստացել այն առումով, որ նախատեսվող գործունեությունը բոլոր 3 բաղադրիչներով ենթակա է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

1-ին ներկայացված բաղադրիչը վերաբերվում է «Կապանի ԼՀԿ»-ի հարստացուցիչ ֆաբրիկան նախագծային հզորությամբ շահագործելուն: Այս գործունեությունը չի ենթադրում սարքավորանքի, տեխնիկայի, որևէ այլ ենթակառուցվածքի ավելացում: «Կապանի ԼՀԿ»-ի հարստացուցիչ ֆաբրիկան ի սկզբանե իր հիմնարար նախագծով նախատեսված է եղել որպես տարեկան 1 միլիոն տոննա հանքաքար վերամշակող ֆաբրիկա: Հետագայում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փաստաթղթերում վերջինիս արտադրողականությունը սահմանափակվել է տարեկան 600 000 տոննա հանքաքարով, պայմանավորված տվյալ պահին ֆաբրիկային հումք մատակարարող հանքի արտադրողականությամբ: Միայն այդ սահմանափակող գործոնն է: Ներկայում, քանի որ ֆաբրիկան ունի նաև հումքի այլ մատակարար, մասնավորապես «Լիճքվազ» ՓԲԸ, որը շահագործում է Լիճքվազի ոսկու հանքավայրը, արդիական է դարձել, հարստացուցիչ ֆաբրիկան նախագծային ամբողջ հզորությամբ ծանրաբեռնել, ի լրումն դրա «Կապանի ԼՀԿ»-ն վերահաշվարկել, վերագնահատել է նաև Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի պաշարները, ներկայում պաշարների հաշվարկները ընդերքաբանական փորաքննության փուլում են, և ընդերքաբանական փորձաքննության արդյունքներով նոր պաշարներ ուեննալուց հանքավայրի լեռնատեխնիկական հնարավորությունների մասին արդիականացված պատկերացումներ ունենալուց հետո կգնահատվի նաև Շահումյանի հանքավայրի տարեկան արտադրողականությունն ավելացնելու, հարստացուցիչ ֆաբրիկան գերակշռորեն Շահումյանից արդյունահանվող հանքաքարով ծանրաբեռնելու հեռանկարը, նկատի ունենալով նաև այն, որ «Լիճքվազ» ՓԲԸ-ն նաև դրական եզրակացություն ունի հենց Լիճքվազ Թեյի հանքավայրի հենքի վրա հարստացուցիչ ֆաբրիկա կառուցելու նախագծի համար և որոշակի գործունեություն այդ ուղղությամբ արդեն ծավալել է:

Հակիրճ ներկայացնեմ, թե ինչպիսին է հարստացուցիչ ֆաբրիկայում հանքաքարի վերամշակման գործընթացը, որն ընկերությունը փորձարկել է և մշակել տեխնիոլոգիական ռեգլամենտ, արդեն տարեկան 1 միլիոն տոննա հանքաքարի վերամշակման հեռանկարով: Հանքաքարը անցնում է ջարդման, խոշոր ջարդման, մանրացման, ֆլոտացման, թանձրեցման և ջրազրկման փուլեր: Ջարդման փուլը Շահումյանից արդյունահանվող հանքաքարի և Լիճվազ-Թեյի հանքավայրից արդյունահանվող հանքաքարի համար նույնական է: Այդ վերամշակման տեխնոլոգիաները սկսում են տարբերվել մանրացման փուլով և ֆլոտացման փուլով: Եթե Շահումյանից արդյունահանվող հանքաքարի վերամշակման արդյունքում արտադրվում է երկու տեսակի խտանյութ՝ պղնձի և ցինկի,

երկուսն էլ ոսկու որոշակի պարունակությամբ, ապա Լիճքվազ Թեյի հանքաքարի վերամշակման արդյունքում արտադրվում է միայն մեկ խտանյութ՝ ոսկու խտանյութ՝ պղնձի, արծաթի որոշակի պարունակությամբ: Վերամշակումը ոչ մասնագետի համար այս նկարագրությունների տարբերությունը դժվար որսալի կլինի, դրա համար Ձեզ շատ այս տեխնոլոգիական նրբությունների մեջ չներգրավեմ, պարզապես նշեմ, որ ի տարբերություն հնարավոր Ձեզ ծանոթ այլ տեխնիոլոգիաների, այս հարստացուցիչ ֆաբրիկան կոլեկտիվ խտանյութ չի արտադրում, կորզումը տեղի է ունենում նույն ապարախյուսից, առաջին կորզումը պղնձի ֆլոտացիայով է, երկրորդը՝ ցինկի ֆլոտացիայով, երկու դեպքում էլ Շահումյանի հանքաքարի վերամշակման ժամանակ եռաստիճան լրաֆլոտացում է տեղի ունենում, իսկ Լիճվազ-Թեյի հանքաքարի վերամշակման ժամանակ պղնձի ցիկլում լրաֆլոտացման աստիճաններն երկուսն են, ցինկի ցիկլում (թեև ցինկ այստեղ պայմանական պիտի երկու ցիկլերը անվանենք Լիճքվազ-Թեյի պարագայում, քանի որ արտադրվողը մեկ խտանյութ է) ընդհամենը մեկ լրաֆլոտացում: Այսքանը հարստացուցիչ ֆաբրիկայի մասով: Քանի որ այդ վերամշակման արդյունքում ձևավորող պոչանքի զանգվածի տնօրինման հեռանկարը վերաբերվում է փորձաքննության ներկայացված մեր հաջորդ նախատեսվող գործունեությանը, անմիջապես անցնեմ պոչամբարի վերակառուցման ներկայացված նախագծին: Ներկայում Գեղանուշի պոչամբարը, որը ծառայում է հարստացուցիչ ֆաբրիկայի վերամշակման արդյունքում ձևավորվող պոչանքի տեղակայման համար: Պոչամբարը, հարստացուցիչ ֆաբրիկայից 1,5 կմ հեռավորության վրա է, ներկայում զբաղեցնում է 32 հեկտար տարածք, պոչամբարի պատվարները վերընթաց տիպի են, ես քիչ հետո այդ տիպի մասին ավելի մանրամասն կասեմ, եթե այդ տերմինը որևէ մեկին ծանոթ չէ, շեպերի թեքությունը կազմում է 3:1 հարաբերությամբ, ասյինքն 3 մետր առաջընթացին համապատասխանում է 1 մետր վերելք՝ թեքության վերաբերյալ պատկերացում տալու համար: Պատվարի նիշերը ապրիլի 1-ի դրությամբ. այս պոչամբարի առանձնահատկությունն այն է, որ ունի երկու պատվար, սա ի դեպ հաշվի առնելով, որ այս հանրային քննարկմանը մասնակցում են նաև մայրաքաղաքից ժամանած բնապահպանական տեղեկատվական հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ, այս հանգամանքի բնապահպանական արժեքը հատուկ ուզում եմ ընդգծել, պոչամբարը երկու պատվար ունի, լանջն ի վեր բարձրացող մասը ևս պարփակված է պատվարով, ինչը սահմանափակում է պոչանքի տարածումը փոքր հաստություններով մեծ մակերեսների վրա և մինիմալ նվազագույն մակերես պոչանքի տակ ներգրավելով տալիս է առավելագույն ծավալ: Ապրիլի

1-ի դրությամբ պատվարների նիշերը եղել են հարավային պատվարի համար 833,5 տասնորդական մետր բացարձակ նիշով, հյուսիսային պատվարինը՝ 836 նիշով: Պատվարի այն տարողությունը, որը ձևավորվել էր վերջին նախագծային փոփոխության արդյունքներով, վերջին նախագծային փոփոխությունը հիշեցնեմ շահագրգիռ հանրության այն մասնակիցներին, որոնք մասնակցել են նաև այս թեմայով նախորդ հասարակական լսումներին, վերջին փորձաքննությունը վերաբերել է պատվարների ամրաբեռնման նախագծին: Այդ ամրաբեռնման նախագծով տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում ձևավորված նախագծային ծավալը 11,7 տասնորդական միլիոն խորանարդ մետր էր: Ներկայում ընկերությունը 2 խնդիր լուծելու նկատառումով՝ 1-ին խնդիրը պոչամբարի սեյսմիկ կայունությունը համապատասխանեցնել ամենաառաջադեմ միջազգային չափանիշներին: 2-րդ խնդիրը ապահովել «Կապանի ԼՀԿ»-ի գործունեության շարունակականությունը երկարաժամկետ հեռանկարում: Երկու խնդիրների համաժամանակյա ամենաառաջադեմ տեխնոլոգիայով լուծելու նկատառումով որոշում է ընդունվել, որ վերընթաց տարբերակից պոչամբարի պատվարների զարգացման անցում է կատարվելու կենտրոնահեն տարբերակի: Որպեսզի այս որոշման արդիականությունը ավելի պարզ լինի, նշեմ, որ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թվականի 3401, եթե ճիշտ եմ հիշում հիդրոտեխնիկական կառուցվածքներին ներկայացվող պահանջները սահմանող այդ չափորոշիչ այդ հրամանով էր. քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով հաստատված այդ իրավական ակտով սահմանված չափորոշիչները այլևս բացառում են նաև ընդերքի մասին օրենսգրքով էլ է սահմանված, այլևս բացառում են նոր կառուցվող պոչամբարները վերընթաց պատվարներով կառուցել, թեև դա հետադարձ ազդեցություն չունեցող իրավական ակտ է այդ ու հանդերձ օգտագործելով նաև այս հնարավորությունը ընկերությունը որոշում է կայացրել անցնել այդ առավել անվտանգ զարգացման սցենարին և լուծել միանգամից 2 հարց: Այս համատեքստում, սկսած 2028 թ-ի մայիսից, որն արդեն կլինի պոչամբարի պատվարների եղանակով բարձրացման 841 նիշը, այդ 841 նիշից հետագա շարունակումը պատվարների զարգացումը կատարվելու է կենտրոնահեն եղանակով: Եթե վերընթաց տարբերակը ենթադրում է պատվարների կառուցում հենց ապարախյուսից և պատվարի առանցքը լանջն ի վեր զարգանալով անընդհատ հայտնվում է այնպիսի դրության մեջ, որ պատվարի ամրաբեռի հիմքում լինում է ապարախյուս, որը ինչպես ցույց է տվել տարբեր երկրներում պոչամբարների պատահարների ուսումնասիրման վիճակագրությունը ռիսկայնություն ունի՝ մասնավորապես ստատիկ հեղուկացման ռիսկայնություն, ապա

կենտրոնահեն պատվարի կառուցման պարագայում պատվարը նույն առանցքով է բարձրանում ինչ որ պոչանքը: Եթե հնարավորություն լինի պատկերավորել կարող եմ ցուցադրել թե ինչպես է տարբերվում վերընթաց եղանակով կառուցվող պատվարը կենտրոնահենից: Այդ նկարները կարող եմ պարզապես ցույց տալ իմ համակարգչի էկրանին: Ընդունելի՞ է պարոն Փարսյան, սա կենտրոնահեն պատվարն է, սա վերընթաց պատվարը: Մյուս սցենարը՝ վարընթաց պատվարի սցենարը, արդեն նույն անվտանգության պայմաններում կամ անվտանգության տեսանկյունից աննշան առավելությունների պայմաններում շատ ավելի փոքր ծավալ է ստեղծում: Արդյունավետ ծավալ ընդունելի անվտանգության կոմպրոմիսը կենտրոնահեն պատվարն է, որը ներկայում միջազգայնորեն ամենատարածված և ամենաընդունելի սխեման է պոչամբարի պատվարի զարգացման: 841 նիշից մինչև 871 ներկայում նախատեսված առավելագույն նիշը պոչամբարը զարգանալու է հենց կենտրոնահեն եղանակով: Դա մեզ հնարավորություն է տալիս նախագծային նախկին 11,7մլն խմ-ի փոխարեն ունենալ 17,4 մլն խմ և արդեն ավելացված արտադրողականության, այսինքն այս ավելացումը պայմանական է, որորվհետև կոմբինատը պարզապես աշխատելու է նախագծային հզորությամբ: Նախագծային հզորությամբ աշխատանքի պայմաններում տարեկան 1մլն տոննա հանքաքար մշակելով՝ կոմբինատը պոչանքների անվտանգ տեղակայման հարցը լուծում է մինչև 2038 թվական: Մի նախագիծ ևս դրված է փորձաքնության և այսօրվա հանրային քննարկման օրակարգում ներառված: Այդ նախագծի արդիականացման համար մենք պարտական ենք առաջին հերթին համայնքային իշխանության բարձրացրած պահանջին. խոսքը վերաբերում է Գեղանուշ գետի ջուրը պոչանքի զանգվածը շրջանցելու համար կառուցված թունելին: Թունելի երեսարկը, ինչպես համայնքի պահանջով մեր իրականացրած ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որն ունի վնասվածքներ և ենթակա է նորոգման: Այս համատեքստում մի քանի նկատառումներ եմ ուզում հայտնել. թունելը՝ հորատանցման եղանակով բարձր կրողունակությամբ ապարներով անցկացված կառույց է և թունելի ներքին երեսարկը կրողունակության որևէ խնդիր չունի, դա կրող երեսարկ չէ: Այդուհանդերձ, եթե վնասվածքները, իսկ հայտնաբերված վնասվածքները խորշեր, ճաքեր, ճեղքեր են, ու այդ ճեղքեի հետևում ձևավորված խոռոչներ, եթե դրանք պատշաճ չտնօրինվեն՝ ինքը երեսարկը կարող է փլուզվել, և թեև բուն թունելի կառուցվածքը վտանգված չէ: Ապարների կրողունակությունը մեր ուսումնասիրության արդյունքնեով ցանկացած կասկածից դուրս է, այդուհանդերձ, թունելի երեսարկի փլուզված զանգվածը կարող է ջրի անցման համար

խոչընդոտ ձևավորել և հանգեցնել թունելի անանցանելիությանը, դրա համար մշակվել է առանձին նախագիծ ճեղքերի, խոռոչների, ճաքերի, անցքերի և մետաղական կոնստրուկցիաների կոռոզիան կանխարգելու դրանք վերականգնելու վերաբերյալ, եթե որևէ մեկին հետաքրքրի դետալիզացիան այդ նախագծի՝ կարող ենք ներկայացնել:

Հանրային լսմանը մասնակցում է նաև ֆաբրիկայի և պոչամբարի տարեկան մեկ մլն տոննա արտադրողականությամբ շահագործման դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վրա գնահատում իրականացված «Ակունք Ֆիրմա» ՍՊԸ-ի տնօրեն պարոն Հովհաննես Նիկողոյանը և «Կապանի ԼՀԿ»-ի բնապահպանության բաժնի ղեկավար՝ Աիդա Ալեքսանյանը, ով իրականացրել էր թունելի վերանորոգման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում: Եթե նախագծի վերաբերյալ, ՇՄԱԳ-ների վերաբերյալ հարցեր կան հաճույքով կարձագանքենք, շնորհակալություն:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Շնորհակալություն պարոն Ավագյան: Պարոն Ավագյանին հարցեր կա՞ն: Եթե հարցեր չկան անցնենք հաջորդ զեկուցողին:

Զեկույց (Աիդա Ալեքսանյան)- Ըստ էության թունելի նախագիծը մանրամասն ներկայացվեց գործընկերոջս կողմից: Միայն նշեմ, որ այն բնապահպանական ռիսկերը, կամ բնապահպանական ասպեկտները, որոնք կարող են առաջանալ թունելի վերանորոգման աշխատանքների ժամանակ ամբողջությամբ գնահատվել են և հիմնական խնդիրը կարող է առաջանալ, ինչպես ցանկացած շինարարական աշխատանքների ժամանակ: Շինարարական տեխնիկայի աշխատանքից առաջացած փոշու և այլ արտանետումները, որոնք համաձայն մեր հաշվարկների նորմատիվների սահմաններում են: Նաև որոշակի թափոնների գոյացման հարց կարող է առաջանալ, մասնավորապես՝ կենցաղային թափոնների և շինարարական թափոնների, որոնք կառավարվելու են ընկերությունում գործող ընթացակարգերով և օրենքով սահմանված կարգով: Ըստ էության ծավալների ավելացում չի ակնկալվում, ինքը հաշվարկված է և՛ անձնագրային տվյալներով, և՛ թափոնների նորմատիվների նախագծով: Տեխնիկայի սպասարկումը իրականացվելու է ընկերության տարածքում, այնպես որ անմիջապե բուն աշխատանքների ժամանակ, տեխնիկայի սպասարկման ժամանակ առաջացող խնդիրներ չեն լինելու, որովհետև դրանք կարգավորվելու են ընկերության ընդհանուր ընդունված ընթացակարգերով: Ջրօգտագործման մասով՝ խմելու ջուրը շինարարության աշխատակիցներին տրամադրվելու է շշալցված, իսկ փոշու արտանետումը կանխելու համար ջրցանը, ըստ էության, հաշվարկված

է և լրացուցիչ ջրօգտագործման անհրաժեշտություն չի լինելու: Թերևս այսքանը: Եթե հարցեր կան, սիրով կպատասխանեմ:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Շնորհակալություն, կա՞ն հարցեր: Խնդրեմ ներկայացեք:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Ես Մոնիկան եմ Երիցյան, «ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության լրագրող: Կարելի՞ է հստակեցնել արտադրողականության ավելացման դեպքում ֆաբրիկայի, որը ներկայում, հիմա այդ հայտն է օրակարգում դրված, հեռանկարում հանքավայրի հանքաքարի արտադրողականությանը կավելանա ինչպես հասկանում ենք: Այդ ռիսկերի մասին կարո՞ղ եք խոսել: Իրենից ի՞նչ նոր ռիսկեր է ենթադրում կամ ինչ-որ վտանգներ, չգիտեմ, դրանց նվազեցման հետ կապված գործողություններ մշակվե՞լ են, կա՞ ինչ-որ հայտ, նախագիծ, կամ ի՞նչ ունեք: Որովհետև 600մլն-ից, կներեք 600000-ից մինչև 1մլն կրկնակի չէ, բայց ահագին ծավալով ավելացում կա:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) - Մինչ նախագիծ անելը անհրաժեշտություն չկա...

Հարց (Մոնիկա Երիցյան) – Նախագիծ դեռ չկա՞: Նախագիծ, որպես այդպիսի դեռ չկա՞:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Ռազմավարական էկոլոգիական գնահատման ինստիտուտ կա, Ձեր օգտագործած տերմիններից մեկը ստիպեց, որ պարոն Նիկողոսյանը հիշեցնի, որ ՌԷԳ-ի ենթակա գործունեություն չի սա:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Իսկ ինչի՞ ՌԷԳ-ի ենթակա չէ: Ինչ-որ դա՞սի է պատկանում:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – եթե ուզում ես նոր գործունեություն իրականացնել անում ես ՌԷԳ: Քանի որ ձեռնարկությունը գործող է, ապա ՌԷԳ-ի անհրաժեշտություն չկա:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Հասկանալի է, բայց ՇՄԱԳ փորձաքննության ենթակա է: Այս պահի դրությամբ ինչ-որ հայտ, նախագիծ, ինչ-որ բան կա: Ես հասկանում եմ, որ սա առաջին լսումն է ու ...

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – ՇՄԱԳ կա:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Փաստաթուղթն ուղղակի հասանելի չէր, մեզ փոքրիկ գրություն էր հասանելի, համայնքապետին մենք չենք հանդիպել ու չգիտենք ինչ է արտացոլված: Իսկ հիմա կարելի՞ է ներկայացնել հիմնական ռիսկերը, որոնք ՇՄԱԳ-ում Ձեր արտացոլվում են, կապված աղտոտման ազդեցության:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Նախ ֆաբրիկան աշխատելու է լրիվ շրջանառու ջրի համակարգով: Այսինքն արտահոսքեր, արտադրական կեղտաջրեր մենք չենք ներառում: Մենք 64.5 տոկոս հետ ենք դարձնում ֆաբրիկա: Արտահոսք ընդհանրապես չունենք: Հիմա ինչ վերաբերվում է փոշուն նշեմ, որ մենք ունենք 3 աստիճան ջարդում, տեղադրել ենք ցիկլոններ և մառախուղային թնդանոթներ՝ նստացնում է փոշին և արտանետում է քչանում: Դա թույլ է տալիս 80-90 տոկոսով փոշու արտանետումները կրճատել, ցիկլոնների միջոցով՝ 80-85 տոկոսով կրճատել փոշին: Դրա համար մենք արտադրամասի տարածքում ունենք միջինը 0.22 ՊԴԿ, իսկ սահմանային պաշտպանիչ գոտում կլինի մոտ 0.058: Այսինքն՝ ՍԹԿ դա այն կոնցետրացիան է, որը չի ազդում Ձեր վրա, Ձեր սերունդների վրա և այլ սերունդների վրա: Այսինքն՝ այս տեսակետը ապահովված ենք:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Իսկ տարածքային ավելացումներ նախատեսվո՞ւմ են:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ոչ:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Շատ կարճ անդրադարձ անեմ պոչամբարի մասով: Պարոն Նիկողոսյանը շատ ճիշտ նշեց ֆաբրիկայի մասով: Քանի որ գործող ֆաբրիկայի եղած նախագծով ընդամենը մենք ֆորմալ սահմանափակումն ենք հանում, ֆաբրիկան շահագործվում է այնպես, ինչպես նախատեսված էր այն շահագործել, ապա այնտեղ որևէ նոր տարածքի մասին խոսք լինել չի կարող: Պոչամբարի դեպքում այս պահի տարածքը 32 հա է, եթե չլիներ նախագծային փոփոխություն և պոչամբարը շահագործվեր մինչև 851 նախկին նախագծով նախատեսված առավելագույն նիշը, ապա այն կզբաղեցներ 36 հա տարածք՝ ունենալով 11.7 մլն խոր. մետր ծավալ: Ներկա փոփոխության արդյունքում այն բանի շնորհիվ, որ միայն լեռների լանջերի այդ նեղ հատվածներն են հայտնվելու նոր պոչանքի զանգվածների տակ, մենք ունենում ենք 17.4 մլն խոր. մետր ծավալ պոչամբարի ակնկալվող մակերեսը շահագործման վերջում պայմանական 871 առավելագույն բացարձակ նիշի պայմաններում կլինի 40 հա: Այսինքն, ընդամենը 4 հա լրացուցիչ մակերես պոչամբարի տակ ներառելով, ահռելի օգտակար ծավալ ենք ունենում: Պոչամբարի աշխատանքի շարունակականության, ֆաբրիկայի աշխատանքը երկարաժամկետ հեռանկարում ապահովելու առավել փոքր մակերես զբաղեցնելու տարբերակ գոյություն չունի: Շրջակա

միջավայրի նկատմամբ առավել խնայողական եղանակով այս հարցը լուծելու տարբերակ գոյություն չունի:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Իսկ այդ 4 հեկտարի հարցը լուծվա՞ծ է համայնքի հետ:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացքը բարեհաջող ավարտելուց հետո մենք արդեն մնացած՝ օրենքով նախատեսված գործընթացները կնախաձեռնենք: Սա առաջին փուլն է:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Իսկ ներկայում ինչքանո՞վ է լցված պոչամբարը:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Ապրիլի 1-ի դրությամբ 8.3 մլն խոր. մետր: Հիմա կարող ենք դրան ավելացնել ևս պայմանական 100 հազար խոր. մետր:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Եվ նաև նշեցիք թունելի հետ կապված, որ այնտեղ խնդիրներ եք արձանագրել դրա համար այդ վերակառուցումն է նախաձեռնվել , այդ գետը շրջանցող թունելի հետ կապված, ի՞նչ խնդիրներ եք արձանագրել:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – թվարկեցի ես, այդ խնդիրները երեսակի վրա ճաքեր, ճեղքեր, անցքեր, դրանց հետևում խոռոչներ:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Դրանք վնասներ հասցրել էին համայնքին:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Դրանք չեն կարող որևէ վնաս հասցնել, բայց եթե մնան անխնամ անորոշ հեռանկարում, ապա կարող են հանգեցնել թունելի երեսակի բետոնե զանգվածի փլուզման, որը կարող է խոչընդոտ դառնալ ջրանցի համար: Եվ, որպեսզի նման բան չլինի, ես կրկնեմ այդ մասը, թունելի երեսարկը չունի կրող նպատակ, կրող գործառույթ չունի: Դա պարզապես երեսակ է: Թունելը՝ բարձր կրողունակության ապարներով հորատանցման արդյունք է, այսինքն, եթե որևէ երեսարկ էլ չլիներ, ապա թունելը կայուն հիդրոտեխնիկական կառույց է: Բայց երեսակը փաստացի կա, եթե այն պատշաճ վիճակում չլինի, ապա հենց երեսարկի զանգվածը պոտենցիալ խոչընդոտ է: Որպեսզի այդ զանգվածը երբևէ չփլուզվի, այդ ճաքերի ճեղքերի հետևում խոռոչները մեր ներկայացրած նախագծային լուծումներով կլցվեն: Մի դեպքում դա բետոնային խառնուրդ է, այլ դեպքում պոլիուրետան, և այլ նյութեր, որոնք տարբեր մասնագիտական հաշվարկներով հիմնավորված են որպես առավել արդյունավետ լուծումներ: Նաև լուծումներ են տրվելու այն հատվածներում, որտեղ դիտարկվում են մետաղի կոռոզիա, բացված է այդ մետաղը և այլն: Երեսակը բերվելու է պատշաճ դիրքի, պատշաճ տեսքի և այսուհետ առավել օգտակար խնամքի տակ կլինի:

Հարց (Մոնիկա Երիցյան) – պարոն Ավագյան, դուք ընկերությա՞ն ներկայացուցիչ եք:

Պատասխան (Վահրամ Ավագյան) –նախագծող ընկերության:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Որովհետև այստեղ հարցեր կան կապված արդեն ընկերության և համայնքի հետ հարաբերությունների, այս ավելացումը արտադրողականության հեռանկարում, արդեն հանքաքարի հետ կապված: Այսինքն ստացվում է կոմբինատը հզորացնում է իր ներուժը և ավելի մեծ ազդեցություն, դեր կունենա համայնքում, համայնքի հետ կապված: Ու այստեղ կան փոխհարաբերություններ՝ ի՞նչ ծրագրեր կան համայնքի համար, առողջության ապահովագրության, սոցիալական ծրագրեր:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Շատ լավ, ես նաև որպես գաղտնիք Ձեզ հայտնեմ, որ այն ընկերությունը, որին ես ներկայացնում եմ ընկերությունների նույն խմբի մաս է, որի մասին նաև «Կապանի ԼՀԿ» և Ձեր տված հարցերին նախաձեռնող ընկերության մոտեցումներին պաշտոնական ճշգրտությամբ լավատեղյակ եմ և կարող եմ նաև այդ բնույթի հարցերին արձագանքել: Վերադառնալով Ձեր նախորդ հարցում բաց մնացած մի դրվագի, ասեմ, որ 600 հազար տոննայից մեկ մլն հասցնելու այդ նախագծային փոփոխության շրջակա միջավայրի գնահատման արդյունքներով մենք համոզվել ենք, որ առավելագույն դեպքում մենք ունենք համամասնորեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ավելացում, որևէ որակական շեմ փոխելու իրադրություն չունենք: Որոշ դեպքերում էլ ընդհանուր հաշվով բնապահպանական իրադրության բարելավում կա: Եթե հաշվի առնենք, որ հանքաքարի առկա զանգվածը պետք է այդուհանդերձ վերամշակվի, ապա մեր առաջարկած նոր արտադրողականությամբ այդ զանգվածի վերամշակումը գումարային առավել ընդունելի նվազ ազդեցություն է ունենալու շրջակա միջավայրի վրա: Հիմա անդրադառնալով ընկերության...

Հարց (Մոնիկա Երիցյան) – Ո՞նց եք հաշվարկել դա, որ առավել նվազ է ազդեցությունը:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Շրջակա միջավայրի ազդեցության գնահատումը, որ դուք ունենաք, արդեն ջրօգտագործման հաշվարկը կտեսնեք, թե ինչպես է փոխվել: Ջրօգտագործման հաշվարկով կգնահատեք այդ հաշվարկում ջրի օգտագործվող քանակի ավելացման համամասնությունը վերամշակվող հանքաքարի ավելավմանը և այլն: Դուք այդտեղ շատ տեղեր ինքներդ կաևող եք եզրակացություն անել ու տեսնել որ բերածս գնահատականը, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության ծավալը առավելագուն դեպքում

համամասնորեն է ավելացել, որևէ շեմ, չի անցել, արտադրական որևէ փոփոխության չի բերել: Դա ակնհայտորեն արտացոլված է երկու ՇՄԱԳ-ներում էլ: Անդրադառնալով համայնքի հետ համագործակցության հեռանկարներին, թեև այս քննարկումը համայնքի ղեկավարի տեսադաշտում է արդեն և համայնքի ղեկավարի վերադաս գնահատումը կամփոփի Ձեր տված հարցի իմ պատասխանը, այդուհանդերձ նշեմ, որ 2023 թվականի վերջում տեղի ունեցած սեփականատիրոջ փոփոխությունը այս տնտեսավարող միավորին բերել է համայնքի հետ երկխոսության բոլորովին այլ մակարդակի ձևավորման համայնքի խնդիրներում ձեռնարկության բոլորովին այլ մակարդակի ձևավորման: Դա արտացոլվել է փոխադարձ խնդիրների ընկալման՝ մի դեպքում համայնքի կողմից ընկերության առջև դրված ընկերության համարժեք գնահատելու դրանց շատ ավել հոգատար մոտեցում ցուցաբերելու, մյուս դեպքում ընկերության կողմից համայնքի առջև դրված խնդիրները ընկալելու, դրանց համարժեք մոտեցում ցուցաբերելու: Նաև այն հրապարակվող մեծությունները համայնքին ցուցաբերվող սոցիալական օժանդակության . ծավալների, որ դուք կարող եք լրատվամիջոցներից ծանոթանալ, այն տարեկան կնքվող պայմանագրի ծավալն էապես ավելացել է: Այն ամրագրվող նվազագույնը, որ ներառվում է պայմանագրում Կապան համայնքին ցուցաբերվող օժանդակություններում միջնորդավորվում է Կապանի լեռնահարստացման կոմբինատի սեփականատիրոջ կողմից հիմնադրված հիմնադրամով և այդ հիմնադրամը Կապան համայնքի հետ կնքել է սոցիալ-տնտեսական աջակցության պայմանագիր՝ մեկ տարվա կտրվածքով: Եթե նմանատիպ պայմանագրերը նախկինում 125, 130 միլին դրամ ծավալ ունեին, ապա ներկայում կտրուկ փոխվել է: Չնայած ներդրումային բավականին մեծ բեռին, որ ընկերությունն այսօր ունի, այդ գումարը հասցվել է 180 միլիոն դրամի՝ տարեկան կտրվածքով: Դա կարող ենք ամրագրել, որ ներառում է այն նվազագույնը, որ ցանկացած հեռանկարում ընկերությունը ցուցաբերելու է որպես դրական օժանդակություն համայնքին: Որ շատ դետալիզացիայից կարողանամ խուսափել, ամրագրենք որպես ամփոփում, որ ընկերության և համայնքի երկխոսությունը շատ ավելի բարձր մակարդակի վրա է, քան երբևէ եղել է:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Պարոն Ավագյան, իսկ տեխնիկական վերազինում և այլն, կապված աշխատակիցների անվտանգության հետ, հիմա նաև ակտուալ է, երբ աշխատակիցները առողջապահական ապահովագրության հարցեր են բարձրացնում: Նման ինչ-որ միջոցառումներ, նախաձեռնություններ ունե՞ք:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Այո, ներկայում աշխատողների, ընդ որում սա վերաբերում է ոչ միայն Կապանի լեռնահարստացման կոմբինատին, այլ քիչ առաջ հիշատակածս խմբի բոլոր ընկերություններին, աշխատողների ապահովագրություն ներկայում իրականացվում է և իրականացվում է գործատուի ծախսերով: Իսկ անվտանգության տեխնիկայի հետ կապված հարցերը մեր թիվ մեկ առաջնահերթությունն են: Դրա մասին խոսում են նաև և օբյեկտիվ ցուցանիշները: Եթե դրանց վերաբերյալ տեղեկանք կուզեք, ապա կտրամադրեմ:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Մեկ հարց էլ: Եթե ֆորսմաժորային իրավիճակներ ամեն դեպքում բոլոր տեսակի գործողություններում նախատեսվում է, եթե հանկարծ լինեն ֆորսմաժորային իրավիճակ, այսպես տեսականորեն պատկերացնենք, դուք գրավոր ինչ-որ որաշխիքներ ունե՞ք համայնքի բնակիչների, աշխատակիցների համար, ով կարող է դրա ազդեցության տակ հայտնվի ֆորսմաժորային իրավիճակների դեպքում, փոխհատուցման մեխանիզմներ ունե՞ք:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Չգիտեմ ինչը Ձեզ տրամադրեց այդպիսի հեռանկարներ...

Լրացում (Մոնիկա Երիցյան) – Բացարձակ չտրամադրեց: Հասարակ շինարարության դեպքում ...

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Մեր օրենսդրությամբ Ձեր նշած բոլոր հեռանկարները, բոլոր հնարավոր ռիսկերը ենթակա են համարժեք գնահատման, դրանք տեղի ունենալու դեպքում գործողությունների պլանները մշակվում են օրենքի պահանջի կատարման համար, որովհետև դա օրենքի պահանջ է, և բոլոր հնարավոր կամ ողջամտորեն կանխատեսելի ֆորսմաժորային իրավիճակներին արձագանքման պլաններ ընկերությունն ունի: Դրանք և քաղաքաշտպանության պլաններ են, և տարբեր վթարներին արձագանքելու պլաններ են: Ընկերությունը բոլոր այդ պլաններն ունի: Բոլոր նախագծային փոփոխություններից հետո, և նույնիսկ առանց դրանց օրենքի սահմանված պարբերականությամբ բոլոր այդ պլանները վերանայվում, թարմացվում են, դրանց վերաբերյալ անցկացվում են անձնակազմի հետ դասընթացներ, վարժանքներ և այլն: Դա արդեն այս փորձաքննության առարկայից դուրս հարց է:

Հարց (Մոնիկա Երիցյան) – Նոր ներդումներ ընկերությունը նախատեսո՞ւմ է այս ծավալների ավելացման հետ կապված, ինչ-որ չափի, ի՞նչ ներդրումներ են պահանջվելու ընկերությանը, որպեսզի ինքը իր նպատակներին հասնի:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Առանձնապես մեծ ներդրումների ճակատ չկա այն բանով պայմանավորված, որ արտադրական հզորությունները սարքավորանքի առումով առկա են: Այո խոսքը ոչ թե որևէ նոր արտադրական հզորության ստեղծման մասին է, այլ եղած արտադրական հզորությունը նախագծային հզորությամբ շահագործելու: Նոր ներդրումների ճակատ չի բացվել այդ տեսանկյունից: Իհարկե որոշ բաներ պետք է կարգի բերել երկար չշահագործվելու հետևանքով բերել ավելի մարտունակ վիճակի ու դա որոշակի ներդրումային բեռ է:

Հարց (Քրիստինե Տեր-Մաթևոսյան) – Ներեցեք մի հստակեցում ևս, դուք գիտեք էկոլուրից եմ: Իհարկե գործընկերուհիս հարցրեց պոչամբարի այդ ծավալների մեծացման դեպքում ազդեցության, դուք էլ նշեցիք պլաններ կան քաղպաշտպանություն և այլն, բայց ինձ հետաքրքիր է, արդյո՞ք այս փոփոխությունների արդյունքում դուք նաև վերանայել եք Ձեր աղետների ռիսկերի մշտադիտարկման պլանները, կա որոշակի դրամագլուխ, որը որ նախատեսվում է այդ աղետների չասեմ կանխման, բայց այդ խնդիրների ի հայտ գալու դեպքում դրանց մեղմման, լուծման համար: Ի՞նչ ծավալների է դա նախատեսված:

Հարց (Վահրամ Ավագյան) – Ինչի՞ ծավալների մասին է:

Հարց (Քրիստինե Տեր-Մաթևոսյան) – Գումարային:

Պատասխան (Վահրամ Ավագյան) – Ուրեմն, նման իրավիճակներ կառավարելու համար դրամագլուխ նախատեսված չէ, օրենսդրորեն նախատեսված չէ: Մեզ բոլորիս հայտնի շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխն այլ բովանդակություն ունի: Դրան չանդրադառնանք: Իմ ավագ գործընկերը հուշում է, որ սա ընդերքօգտագործման ոլորտի փորձաքննվող գործունեություն է և բոլոր նախագծային փաստաթղթերը մինչև Շրջակա միջավայրի նախարարություն փոխանցվելը ներկայացվելու է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, որն ի լրումն Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ուղարկելու այս փաթեթը, ուղարկելու է նաև տեխնիկական անվտանգության փորձաքննության: Դա ընդերքի մասին օրենսգրքով, նմանատիպ փաթեթների փորձաքննության անհրաժեշտ մաս է, և, այս նախագծային փոփոխությամբ տեխնիկական անվտանգության փորձաքննությունը դրական եզրակացությամբ եզրափակելուց հետո է, որ կարող է փաստաթղթերի փաթեթը դառնալ մեր ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաթեթի մաս:

Խոսք (Գևորգ Փարսյան) – Այլ հարցե՞ր: Շնորհակալություն հարցերի համար: Ես փորձեմ ամփոփեմ և իմ ամփոփման խոսքում գուցե դուք գտնեք նաև Ձեր որոշակի

հարցերի պատասխանները: Հաշվի առնելով Կապանի լեռնահարստացման կոմբինատի կողմից իրականացվող գործունեությունը, համայնքի հետ գործնական փոխհարաբերությունները, հետագա գործունեության վերաբերյալ ներկայացնում ենք մեր առաջարկությունները, որոշ դեպքերում, որքան կոպիտ հնչի, պահանջը: Ինչու պահանջ, որովհետև մեզ համար շատ կարևոր է որոշակի դրույթներ, որ մենք պետք է այսօր բարձրաձայնենք: Սկսենք նրանից, որ այսօր իրականացնում ենք հանրային լսում՝ նախ ներկայացվող նախաձեռնությունների հետ կապված, որպես հայտ ներկայացվում է գործունեությունը: Սա չի ենթադրում նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության վերաբերյալ քննարկում: Առաջին հանրային լսումն իրականացելուց հետո ըստ գործող օրենքի՝ Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքով՝ առաջին հանրային լսումից հետո նախաձեռնողը կազմում է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հաշվետվություն և նախագիծ: Նախագիծը կազմելուց հետո՝ ներկայացնում է փորձաքննության, որից հետո արդեն Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության ՊՈԱԿ-ի կողմից նախաձեռնում է համայնքապետարանի հետ միասին երկրորդ հանրային լսումը, որտեղ ներկայացվում է տվյալ հաշվետվությունը և նախագիծը: Ես չեմ պատկերացնում, որ այս փուլում կարող է լինել այս գործունեության հետ կապված որևիցէ հաշվետվություն կամ նախագիծ: Ինչո՞ւ, որովհետև կան մի շարք առաջարկություններ, հարցեր և խնդիրներ, որոնք մեր կողմից առաջադրվելու են և առաջարկվելու են, որոնք մեր կարծիքով պետք է ներառվեն թե՛ հաշվետվության մեջ, թե՛ նախագծի: Սկսեմ առաջինից, գործունեության նախաձեռնության վերաբերյալ, որը վերաբերում է ֆաբրիկային: Ասեմ, որ այստեղ մեր կողմից մեծ հարցեր, որպես այդպիսին, չկան, որովհետև հասկանալի է, որ ֆաբրիկան ունի իր պոտենցիալը՝ 1 մլն արտադրողականության, և այստեղ պարզապես պետք է գոյություն ունեցող նախագծի մեջ անել փոփոխություններ 600 հազարից դարձնել 1 մլն: Մենք ընդհանուր առմամբ, որպես համայնքապետարան դեմ չենք Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության զարգացմանը և առհասարակ կոմբինատի զարգացմանը, քանի որ Կապան համայնքում Կապանի լեռնահարստացման կոմբինատն ունի մեծ սոցիալական ազդեցություն համայնքի կյանքում: Եվ բնականաբար կոմբինատի զարգացումը ենթադրում է նաև իր դրական ազդեցությունը Կապան համայնքի զարգացմանը: Բայց դա չի նշանակում, որ չպետք է հաշվի առնվեն բոլոր ռիսկերը և նաև չպետք է նվազեցվեն շրջակա միջավայրի վրա բոլոր ռիսկային ազդեցությունները: Անցնեմ մեզ համար շատ կարևոր նշանակություն ունեցող

նախաձեռնության երկրորդ հարցին, որը վերաբերում է Գեղանուշի պոչամբարին: Ըստ էության, եթե ներկայացված է, որպես Գեղանուշի պոչամբարի վերակառուցում, սա ավելի շատ խոսում է Գեղանուշի պոչամբարի ընդլայնման մասին: Բնականաբար հասկանում ենք, որ 1 մլն տոննա արտադրողականության ավելացման դեպքում նաև ավելանալու է տարողունակության քանակը և բնականաբար նիշերի փոփոխություն է տեղի ունենում, ինչպես որ նշեցի: Ըստ գոյություն ունեցող փորձաքննական եզրակացության, ինչպես հասկացա, 851 մ-ից փոխվելու մինչև 871 մ նիշի: Անդրադառնամ նաև հնչեցված հարցերին, թե ինչքան հողամաս է հայտնվելու պոչամբարի տակ կամ օգտագործվելու պոչամբարի պոչանքները տեղադրելու պարագայում: Այստեղ պետք է հաշվի առնել նաև ոչ միայն պոչամբարի պոչանքների տակ հայտնված հողամասը, այլ նաև սպասարկող ճանապարհները, ինչպես նաև այլ ենթակառուցվածքներ: Այսինքն՝ եթե հիմա մենք խոսում ենք 40 հա-ի վերաբերյալ, հնարավոր է, որ զբաղեցվի ոչ թե 40, այլ շատ ավելի: Սա կարծում եմ լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի: Իսկ հողերի հատկացման հետ կապված գործընթացը տեղի է ունենում համապատասխան փորձաքննություններ անցնելուց հետո: Նախ հողերի հատկացման համար անհրաժեշտ է հողերի կատեգորիայի փոփոխություն, հետո հողերը որպես կառուցապատման իրավունքով տրամադրել տնտեսվարողին: Պոչամբարի հետ կապված ուզում եմ անդրադառնալ ամենակարևորին, դա՝ պոչամբարի կայունության հարցն է: Ողջունելի է այն հանգամանքը, որ նախատեսվում է պոչամբարի պատվարները կառուցել կենտրոնահեն տարբերակով, թեկուզ ինչպես ասեցիք օրենքի պահանջ է: Մեր համայնքի տարածքում, գիտեք որ, ունենք երկու գործող պոչամբար՝ Արծվանիկի և Գեղանուշի պոչամբարներն են: Արծվանիկի պոչամբարի հետ կապված ասեմ, որ մենք «ՀՊՄԿ»-ի հետ ունենք մեր կարգավորումները, որոնք արդեն իսկ ներկայացված են համապատասխան ՇՄԱԳ հաշվետվությունում, որտեղ ներառված է նախագիծ, որում ներառված է պոչամբարի կայունության ապահովման հարցը: Ես որպես անհրաժեշտ խնդիր կներկայացնեմ նույնը՝ Գեղանուշի պոչամբարի և Կապանի լեռնահարստացման կոմբինատի հետագա գործունեության հետ կապված, ինչը ժամանակին ներկայացրել եմ ՀՊՄԿ-ին: Դա այն է, մինչև նախագիծ կազմելը, որը դուք ներկայացնելու եք, ապագայում Ձեր գործունեության հետ կապված պետք է իրականացվի ներկայիս պոչամբարի մանրամասն ուսումնասիրությունը միջազգային հեղինակություն ունեցող համապատասխան մասնագիտական ունակություններ և լիցենզիաներ ունեցող կազմակերպության կողմից: Կատարված ուսումնասիրության հիման վրա պետք է տվյալ միջազգային կազմակերպության

կողմից տրվի համապատասխան եզրակացություն՝ ներկայիս պոչամբարի իրավիճակի հետ կապված ու դրա հիման վրա տրվի լուծումներ՝ հետագա շահագործման հետ կապված՝ թե ինչպես է պոչամբարն ընդլայնվելու: Նախ՝ մենք պետք է հասկանանք՝ այդ ուսումնասիրության հիման վրա հնարավո՞ր է արդյոք ներկայիս պոչամբարի վրա ավելացնել պոչանքները մինչև 17 մլն խոր մետր քանակի, հասցնել այն մինչև 871 նիշի, և եթե տվյալ ուսումնասիրության և եզրակացության հիման վրա տրվի նման հնարավորութուն, ապա բնականաբար նաև դրա կառուցման բոլոր տարբերակները՝ նախագծման տեսքով: Սա մեր համար խիստ կարևոր է, որովհետև Գեղանուշի պոչամբարը, ինչպես նաև Արծվանիկի պոչամբարը, առհասարակ պոչամբարները մենք համարում ենք բարձր ռիսկային նշանակություն ունեցող օբյեկտներ և, բնականաբար հաշվի առնելով այդ ռիսկայնությունը՝ նաև մենք ուզում ենք, որ կանխարգելենք բոլոր հնարավոր արտակարգ իրավիճակները: Այսինքն՝ ոչ թե քննարկենք, թե հնարավոր արտակարգ իրավիճակի դեպքում ինչ հետևանքներ կարող են լինել և դրա դիմաց ինչ փոխհատուցումներ կարող են լինել, այլ ընդհակառակը՝ մենք ցանկանում ենք, որ բոլոր ռիսկերը գնահատվեն, կանխարգելվեն ի սկզբանե: Ինչպիսին, օրինակ՝ Դուք Ձեր խոսքում նշեցիք՝ պետք է պոչամբարի գործունեության հետ կապված հաշվի առնվի սեյսմակայունության միջազգային մակարդակի բոլոր նորմերի համապատասխանությունը: Սա նույնպես կարևոր է: Ինչ վերաբերում է թունելին՝ այո Դուք ճիշտ նշեցիք այն հանգամանքը, որ նախկին ՇՄԱԳ փորձաքննության և հանրային լսումների ժամանակ մեր կողմից բարձրաձայնվել է այդ խնդիրը, որովհետև դա նույնպես մեզ համար ռիսկային ենթակառուցվածք է և խիստ կարևորում ենք այդ ենթակառուցվածքի անխափան գործունեությունը: Եվ այն ժամանակ մենք, որպես խնդիր նշեցինք, որ պետք է իրականացվի այդ թունելի գործիքային ուսումնասիրությունը: Անհրաժեշտ է ստուգվի գոյություն ունեցող բետոնի որակը, կենսական և քիմիական ուսումնասիրություն իրականացվի և ըստ դրա արդեն տրվեն համապատասխան լուծումներ: Ես լսելով Ձեզ, պարոն Ավագյան՝ Դուք ասացիք, որ ուսումնասիրություններն արդեն կատարված են և մինչև նախագիծ կազմելը, նաև մինչև հաշվետվությունը ներկայացնելը ես կխնդրեմ, որ մեզ փոխանցեք այդ ուսումնասիրության արդյունքները, որպեսզի մենք տեղեկանանք այդ թունելի ընդհանուր վիճակի վերաբերյալ: Պետք է ի լրումն ավելացնեմ, որ նախկինում ներկայացված՝ պոչամբարի գործունեության հետ կապված արդեն իսկ գոյություն ունի 2024 թվականի պետական եզրակացություն, որը որպես պահանջ փորձաքննության մեջ ներկայացված է՝ այդ ուսումնասիրություններ կատարելը և դրան համապատասխան

լուծումներ տալը: Սա վերաբերվում է պոչամբարին և իր ենթակառուցվածքներին, և դիտարկեք որպես պահանջ: Նաև խիստ կարևորում ենք այն հանգամանքը, որ գործունեության արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասները պետք է մինիմալացվեն: Այսինքն՝ հողի, ջրի, օդի վրա, բոլոր նման ազդեցությունները պետք է մինիմալացվեն: Կարծում եմ դա հաշվետվության մեջ մանրամասն կներկայացնեք: Հիմա՝ անցնեմ առաջարկությանը՝ կապված կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի շրջանակների հետ: Ասեմ, որ այո՛, երբ փոխվեց սեփականատերը՝ նաև սոցիալական ծրագրերի հետ կապված ունեցանք փոփոխություններ՝ դրական առումով: Եթե ժամանակին համայնքի նկատմամբ իրականացվում էր համայնքապետարանի հետ համագործակցության 100 մլն, 120 մլն, 130 մլն դրամի չափով ծրագրեր, 2024 թվականին այն հասավ մինչև 150 մլն դրամի: Իսկ արդեն 2025 թվականին, մեր ձեռքբերված պայմանավորվածության համաձայն, սոցիալական ծրագրերը համայնքապետարանի համագործակցությամբ իրականացվում են 180 մլն դրամի չափով: Մենք կարևորում ենք սոցիալական ազդեցությունը, սոցիալական ծրագրերը Կապան համայնքի նկատմամբ և կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ արտադրողականության հզորացման պարագայում, ինչպես նաև այս փոփոխությունների պարագայում, տեղի ունենան փոփոխություններ նաև սոցիալական ծրագրերի շրջանակներում: Նախ՝ նշեմ, որ շատ կարևորում ենք, որ սոցիալական առումով Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության արդյունքում շահառուներ կդիտարկվեն ոչ միայն կոմբինատի աշխատակիցները և կոմբինատի հետ փոխկապակցված կազմակերպությունը կամ այն կազմակերպությունները, որոնք այսօր գործունեություն են իրականացնում, այլ նաև այն բոլոր հնարավոր կազմակերպությունների շահառուները, ովքեր կարող են հնարավորություն ունենալ իրենց համագործակցությունը կազմակերպելու Կապանի լեռնահարստացման կոմբինատի հետ այն ոլորտներում, ինչպիսիք են օրինակ՝ ծառայությունների մատուցման, մատակարարման ոլորտները: Կազմակերպություններ, որոնք կարող են հանդես գալ որպես կապալառու կազմակերպություններ: Այսինքն՝ այն բոլոր կազմակերպությունները, որոնք գործունեություն են իրականացնում Կապանում, այդ կազմակերպությունների շրջանակները ընդլայնվեն: Այսինքն՝ կոմբինատը, եթե ուղիղ կերպով ասեմ, նախընտրի իր գործունեությամբ ավելի սերտ և ավելի ընդլայնված աշխատել տեղական կազմակերպությունների հետ՝ տարբեր ոլորտներում: Սա բնականաբար կբերի սոցիալական առումով դրական արդյունքի: Ունենք նաև առաջարկություն այն առումով, որ եթե այսօր

կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում իրականացվում են համայնքապետարանի հետ համագործակցության 180 մլն դրամ գումարի չափով սոցիալական ծրագրեր, ապա 1 մլն արտադրողականության այս գործընթացի շրջանակներում ՇՄԱԳ հաշվետվության մեջ ներառելով հասցնենք նվազագույնը մինչև 300 մլն դրամի: Սա նույնպես կարևոր ենք համարում և ինչպես ասացի ներառելով, ավելացնելով ՇՄԱԳ հաշվետվության մեջ՝ որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում իրականացվող սոցիալական ծրագրեր, նվազագույնը իրականացվի 300 մլն դրամ գումարի չափով: Սա մեր կողմից հնչեցված այն բոլոր առաջարկություններն են ու պահանջները, որոնք պետք է որպես խնդրի լուծումներ և նաև առաջարկություններ ներառվեն կազմված հաշվետվության մեջ ու ՇՄԱԳ նախագծի մեջ: Խնդրում եմ այս ամեն ինչը հաշվի առնել:

Այսքանը հարգելի գործընկերներ: Այսքանով մենք ավարտենք այսօրվա հանրային լսումը: Շնորհակալություն եմ հայտնում բոլորին հանրային լսմանը մասնակցելու համար և հանրային լսումը համարում ավարտված:

<u>Հանրային քննարկման վարող՝</u>

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

<u>Նախաձեռնող՝</u>

«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ
գլխավոր տնօրեն **Դավիթ Դանիելյան**